

631
U-76

ՀԱՅԿ ԳՐԱԼԵՏՏՈՒՐԻԶՄԻ ՅԵՎ ԵՔՍԿՈՒՐԱՅՈՂ ԳՆԿԵՐՈՒԹ.
(Օ. Ու. Դ. Զ.—Գ. Տ. Ե. Ը.)

Այնպիս
Խ. ՄԻՐԻՄՅԱՆՅԱՆ

Ի Ն Զ Ե Հ Ո Ղ Ը

ՅԵՎ,

ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂԵՐ ԿԱՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

631

Մ-76

ԻՆՉ Ե ՀՈՂԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍԻ ՀՈՂԵՐ ԳԱՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս, յերբ Խ. Միությունն արագ տեմպով
քնթանում և սոցիալիզմի կառուցման վերջնական հաղ-
թանակի ուղիով, մեր ընական արտադրողական մի-
ջոցների, մասնավորապես մեր հողային հարստու-
թյունների, ուսումնասիրությունն ունի խոշոր տնտե-
սական նշանակություն:

Մեր հողային ռեսուրսները կարող ենք լրիվ ոգ-
տապարծել միայն այն ժամանակ, յերբ կծանոթանանք
նրանց առանձնահատկություններին, վորոնք բղխում
են այդ հողերի առաջացման, զարգացման և անընդհատ
փոփոխման պայմաններից: Այդ նպատակով մենք այստեղ
համառոտ կերպով քննության կառնենք այն խնդիրները
թե ինչպես և առաջանում հողը, ինչպիսի հողեր կան
Խ. Հայաստանի տարբեր շրջաններում և վերջապես
կծանոթանանք նրանց հատկությունների և գյուղա-
տնտեսական արժանիքների հետ:

1. ԻՆՉՊԵՍ Ե ԱՌԱՋԱՆՈՒՄ ՀՈՂԸ

Սովորաբար հող անվանում ենք յերկրի կեղեի
այն շերտը, վորն իր մեջ պարունակում և կուլտու-
րական բույսերի համար անհրաժեշտ սննդանյութեր:
Հողն առաջանում և ապառների քայքայված, կամ,



Գառ. Խմբագիր՝ Ս. Խաչատրյան
Մշակող՝ Խ. Մկրտչյան
Գրավիտ ՁԵ 276
Հանձնվել է արտադրության 1 հեղանակերի 1986 թ.
Պատրաստվել է տպագրելու 16 հեղանակերի 1986 թ.
Հրատ ՁԵ 128. Գրավեր ՁԵ 272: Ցերած 2000
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՍԻՄԵՆԻԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ինչպէս ասում ենք, հողմահարված նյութերի, բույ-
սերի և անտեսանելի որգանիդմների, կլիմայական և
այլն պայմաններէ փոխադրեցության անընդհատ պրո-
ցեսի ընթացքում:

Յեւր յերկրի մակերեսի վրայի քարերը և ապա-
սերը ցերեկվա ընթացքում արեւի ազդեցությամբ խիստ
տաքանում են, նրանց մակերեսը լայնանում և, խել
միջին զանգվածը չի տաքանում և ծավալը չի փոխում:
Գիշերվա ընթացքում քարերն արագորեն կորցնում են
ցերեկվա կլանած տաքությունը և սեղմվում և նրանց
մակերեսի ծավալը: Այսպէս անընդհատ լայնանալով
ու սեղմվելով, ապառններն աստիճանաբար քայքայվում,
հողմահարվում են, ձեղքվում և նրանց կեղևը: Այդ
ձեղքերն անձրևների ժամանակ լցվում են ջրով, վորը
ձմեռը սառչելով, լայնանում և և փշրում քարերը: Բա-
ցի այդ, ողի մեջ յիղած թթվածին ու ածխաթթու գա-
զերը և խոնավությունն ազդելով ապառնների վրա,
առաջացնում են քիմիական դանազան նյութեր, վո-
րոնք ջրի մեջ լուծվելով՝ լվացվում են ու ջրի հետ
տարվում: Այսպիսով արագանում և ուժեղանում և ա-
պառնների ու քարերի քայքայումը:

Այս քայքայումներից ստացվում և փերտոն, փո-
շիացած կամ ավելի կոպիտ մասսա, վորը քամին և
ջուրը փռում են յերկրի մակերևութի վրա, լեռներից
փոխադրում ավելի ցածր տեղեր, տարածում դաշտե-
րում: Ապա դրանց մեջ առաջանում և բուսականու-
թյուն, վորը տարեց-տարի շատանալով, աճում և և
մեռնելուց հետո թողնում և բուսական, մնացորդներ:
Վերջինների քայքայումից հողի մեջ աստիճանաբար

կուտակվում և որդանական նյութ, այն նյութը, վորը
հողին տալիս և սև դույն:

Այդ նյութը, վորը կոչվում և հումուս, պարու-
նակում և այն բոլոր տարրերը, վորոնք անհրաժեշտ են
բույսերի սննդառության համար:

Հումուսը ջրի մեջ ներծծվելուց և հողից դուրս
գալուց պաշտպանում և աղոտը, ֆոսֆորը, կալիումը,
տաանց վորի և բույսը չի կարող աճել և բերք տալ:
Հումուսն աստիճանաբար այդ նյութերը մատ-
չելի ձևի վերածելով, տալիս և բույսերին վորպէս
սնունդ:

Այն շրջանները, վորտեղ կլիման ցուրտ և, խո-
նավությունն առատ, իսկ բուսական ծածկոցը հա-
րուստ ու փարթամ, պարզ և, վոր պետք և տան մե-
ռած բուսական զանգվածի մեծ քանակություն, վորի
քայքայման հետևանքով հողի մեջ կառաջանա մեծա-
քանակ հումուս, որինա՛կ՝ խ. Հայաստանի լեռնամա-
սերում՝ Լոռվա տափաստանում կամ Լենինականի
դաշտավայրում, վորտեղ՝ շնորհիվ խոնավ ու ցուրտ
կլիմայի, հարուստ ու փարթամ բուսականության և
այլն, հողի մեջ կուտակվում և մեծ քանակությամբ
հումուս: Իսկ, դրան հակառակ, այն շրջաններում, վոր-
տեղ կլիմայական պայմանները չորային են, պարզ և,
վոր տալիս են ազքատ բուսական ծածկոց, վորի քայ-
քայումից շատ քիչ հումուս և կուտակվում հողի մեջ,
որինա՛կ՝ մեր ղոնրում և Սօրգարաբաղի անջրջի դաշ-
տերում, չորային ու շոգ կլիմայի պայմաններում, կա
չնչին քանակությամբ բուսականություն և հողը պա-
րունակում և վերին աստիճանի քիչ հումուս:

Յեւր չորային ու շոգ շրջանների հողերը յին-

Թարկվում են արհեստական վոտողման, այդ ժամանակ
փոխվում են բնական պայմանները, բուսականություն-
ներն սկսում ե առատությամբ աճել և տալ մեծ քանա-
կությանը բուսական մասսա, վորից հողի մեջ առա-
ջանում ե մեծաքանակ հումուս:

Բացի կլիմայական պայմաններից և բուսակա-
նության քանակից, հողի վորակը կախում ունի տեղի
աւելիքի թեքությունից և դիրքից: Որինակ—յեթե
հողն զգալիորեն թեք ե և լանջ, անձրևներից և ձյու-
նահալից առաջացող ջրի հեղեղները հողի մանր մաս-
նիկները քշում են ներքե, կուտակում ցածրագիր վայ-
րերում: Այդ պատճառով ցածրագիր ու փոս վայրերը
հողի հաստ շերտ ունեն, իսկ բարձրագիր վայրերը
կամ գագաթին մոտ ընկած տարածությունները՝ բու-
րակ շերտ: Ծածրագիր վայրերում, վորտեղ, շնորհիվ
թեքության, կուտակվում ե ավելի շատ հող, բուսա-
կանությունը համեմատաբար ավելի առատ ե աճում,
վորի հետևանքով հողը պարունակում ե համեմատա-
բար ավելի շատ հումուս:

Տարբերություն կա նաև հարավային և հյուսի-
սային կողմն ուղղված թեքությունների վրա առաջա-
ցած հողերի մեջ: Հարավային հողը շատ ե տաքանում,
իր խոնավությունն արագ կորցնում, բուսականու-
թյունը թույլ ե աճում և քիչ հումուս ե պարունակում:
Իսկ հյուսիսային թեքության վրա գոլորշիացումը
թույլ ե և խոնավությունն առատ, բուսական ծած-
կոցը ճոխ ե ու հարուստ, այդ պատճառով ել հողն
առատ հումուս ե պարունակում իր մեջ:

Վերջապես պետք ե նշել նաև այն, վոր հողմու-
հարված ապառների բնութթը և քիմիական կազմու-

թյունը կա խոշոր դեր են խաղում հողի հատկու-
թյունների համար: Որինակ՝ Խ. Հայաստանի հողմու-
հարված, մեծ քանակությամբ կիր պարունակող ա-
պառներից առաջացած հողերը հարուստ են այդ կրով:
Յեթե հողմուհարված, փխրուն մասսան ավազոտ ե,
ապա դրանից առաջացած հողը լինում ե ավազոտ, իսկ
յեթե կավային ե, կլինի կավային:

Հողը բաղկացած ե պինդ մարմնից, նրա մեջ ներ-
ծծված խոնավությունից և զանազան գազերից: Այս
յերեք հիմնական տարրերը, հողի մեջ ապրող բակա-
րիաների և այլ բազմաթիվ ու անտեսանելի որգանիզմ-
ների հետ միասին, պայմանավորում են հողի այն բու-
յուր հատկությունները, վորոնց շնորհիվ հողն ընդու-
նակ ե դառնում բույսերին անընդհատ ապահովել
սննդանյութերով:

Հողի պինդ մասը բաղկացած ե տարրեր արմա-
զիծ ունեցող մասնիկներից՝ կավային նուրբ մասերից,
փոշու մասնիկներից, ավազից, քարերից և այլն, վո-
րոնք կոչվում են մեխանիքական ֆրակցիաներ:

Կավային հողերում գերակշռում են նուրբ մաս-
նիկները՝ կավը, ավազային հողերում ավելի կոպիտ
մասնիկները՝ ավազը և այլն:

Հողի մանր մասնիկները հումուսի միջոցով կըպ-
չում են իրար և կազմում սարուկաւուրա: Որինակ՝ յե-
չում են իրար և Ալմադանի հողերից վերցնենք մի նմուշ,
թե Լոռու և Ալմադանի հողերից վերցնենք մի նմուշ,
կտեսնենք, վոր նա կազմված ե բազմաթիվ մանր հա-
տիկներից, վորոնք և հանդիսանում են նրա սարուկա-
տուրային առանձնացումները: Քանի խիտ ե բուսական
արմատային ցածրը և քանի շատ ե հողի հումուսը,
այնքան լավ ե նրա սարուկաւուրան և ընդհանրապես:

Այն դեպքում, յերբ հողի մեջ ցայտուն և արտահայտված հատիկանման ստրուկտուրան, ջուրը և ողը, վորոնք կենսական անհրաժեշտություն են բույսի զարգացման համար, ազատորեն կմտնեն հողի մեջ, կնեղծվեն, և յեղած խոնավությունն ել չի դուրջեանա և չի կորչի: Յերբ հողը փոշիացած և և բաղադրված և կավից, ջուրը և ողը շատ դժվարությամբ են մտնում հողի մեջ, իսկ յեղած խոնավությունն արագությամբ գուրջեանում և ու անողուտ կորչում:

Հողն իր անցքերում պարունակում և բաղադրանքն խոնավություն և ող, վորոնց քանակական փոխհարաբերությունը կախված և հողի միջմասնիկային անցքերի ծավալից:

Ենթերիկ հումուսի և կավային մասնիկների, հողն բնութենակ և կլանել, ծծել, իր մեջ պահել բույսին անհրաժեշտ այն սննդանյութերը, վորոնք ջրի մեջ լուծված, անցնում են հողի միջով: Այս կլանող հատկությունը խոշոր նշանակություն ունի, վորովհետև անձրևների և վոռոգման ժամանակ հոսող ջրերը հողի մեջ յեղած սննդանյութերը կլուծեն և կտանեն դեպի ծովերն ու այդպիսով կգրկեն կուլտուրական բույսերն արժեքավոր սննդանյութերից:

Հողայական քանակությամբ բաղադրանքները հողի մեջ իրենց անընդհատ աշխատանքով կուտակում են սննդանյութեր, բուսական մեղած մասսան քայքայում և նրանց մեջ յեղած նյութերը բույսերի համար մատչելի ձևի յեն վերածում:

Հողը յուր բոլոր հատկություններով, բաղադրանքների գործունեյության հետ միասին, գտնվում և անընդհատ շարժման, փոփոխման ու զարգացման պրո-

ցեսում, վորի միջոցով նա անընդհատ ստեղծում և բերք և այդպիսով հանդիսանում և արտադրող ուժ, արտադրության միջոց:

2. ԻՆՉՊԻՍԻ ՀՈՂԵՐ ԿԱՆ Խ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ինչպես հայտնի յե, Խորհրդային Հայաստանը, շնորհիվ իր աշխարհադրական դիրքի և ռելյեֆի տուանձնահատկությունների, ունի յուրահատուկ բնապատմական պայմաններ: Արաքսի ափերից մինչև Ալազյաղի և Աղմաղանի բարձրունքներն ընկած տարածության սահմաններում մենք կարող ենք գտնել կլիմայական, բուսաբանական ու հողային այն բոլոր տեսակները, վորոնք գոյություն ունեն Խ. Միության անսահման տերիտորիայի վրա:

Հայաստանի դաշտավայրը՝ բամբակագործական շրջանը՝ մինչև 1000 մ. բարձր և ծովի մակերևութից, Ունի չոր կլիմա և ամառային բարձր ջերմաստիճան, վորի հետևանքով բուսականությունը շատ նոսր ու նիհար և և մեռնելուց հետո արագորեն քայքայվում և: Այդ պատճառով բամբակագործական շրջանների հողերը չնչին քանակությամբ հումուս են պարունակում. այդտեղ հումուսավոր շերտը բարակ և և ստրուկտուրա չի նկատվում: Նման հողերն առանց վոռոգման կուլտուրական բույսերի համար անհարմար են և կոչվում են կիսաանապատային հողեր: Այդպիսի հողեր մենք ունենք, որինակ՝ Սարգարաբաղի դաշտում, Ղաերում և այլն:

Այն դեպքում, յերբ կիսաանապատային հողերը փոռվում են, մշակվում, նրանց մեջ աստիճանաբար

ալիքանում ե հոսմուսի քանակը, շերտը հաստանում ե, ձեռք բերում վորոշ ստրուկտուրա ե բարձրորակ հողի վերածվում: Այդպիսի հողերը կոչվում են կուլտուր-վորակի հողեր ե փաստորեն կազմում են 10. Հայաս-տանի բամբակի տակ դառնում սմբողջ հողերը Ղուր-դուղուր, Վաղպատի, Ղամարլի ե Դավալուշի շրջաննե-րում: Հոսմուսի քանակն այստեղ հասնում ե արդեն մինչև 40|օ-ի, մինչդեռ անմշակ, կիսաանապատային հողերում 1—2 0|օ-ից չի անցնում: Վերջապես Հայաստանի դաշ-տավայրերում մինք ունենք հողի յերրորդ տեսակը՝ աղուտները:

Աղուտներ կոչվում են այն հողերը, վորոնք պա-րունակում են մեծ քանակությամբ ջրի մեջ լուծվող աղեր: Ովքեր յերկաթուղով անցել են Ուլախանլուշի կայարանից Սարգարաբադ, նրանք կարող են տեսած լինել յերկու կողմից հողի սպիտակ, բավականին մեծ տարածութուններ: Ձոր ու շող ժամանակ, յերբ աղե-րը ջրի մեջ լուծված, բարձրացած են լինում հողի մա-կերեսը, ջուրը գոլորշիանում ե, իսկ աղերը կուտակ-վում են ու կազմում այդ սպիտակ ծածկույթ: Կուլտու-րական բույսերը, ըստ իրենց բնական առանձնահատ-կության, նորմալ զարգանում են միայն այն դեպքում, յերբ ջրում լուծվող աղերի քանակը շատ քիչ ե լինում հողի մեջ: Մեզ մոտ տարածված ամենադիմացկուն կուլ-տուրական բույսերը, առվույտը, բամբակը ե չալթու-կը կարողանում են զարգանալ այն դեպքում, յերբ աղերի քանակը հողի մեջ, համեմայն դեպս, 10|օ-ից պակաս ե: Հենց վոր աղի քանակը 10|օ-ից բար-ձրանում ե, հողը բոլորովին անպետքանում ե կուլ-տուրայի համար:

Եվջիլարի գաղտում Արաղլայանում ե Զանգեբա-սարի վորոշ աղերում, վորտեղ կան աղուտներ, հողի մեջ յեղած աղերի քանակը հասնում ե մինչև 5—6|օ-ի: Այդպիսի հողերն ընդունակ կգտնան բերք տալու մի-այն դրանց միլիորացիայից, այսինքն՝ աղերի արհես-տական հեռացումից հետո:

10. Հայաստանի դաշտավայրերում յեղած աղուտ-ները ծածկված են առանձնահատուկ բույսերով, վո-րոնք ընդունակ են աճելու աղերի ամենամեծ քանա-կության մեջ. Մեր աղուտները դաշտավայրում գտնը-վում են գլխավորապես այստեղ, վորտեղ ստորերկրյա ջրերն ալիլի մոտ են հողի մակերևութին: Այդ հան-գամանքը նպաստում ե հողերի արագ աղակալմանը:

Հիշում են ե այնպիսի դեպքեր, յերբ ցածրադիր տարածության սահմաններում կուտակվում ե մեծ քա-նակ խոնավություն, ե յեթե այդտեղ խորն են օտոր-երկրյա ջրերը, կուտակված խոնավությունը հողի մեջ յեղած աղերն աստիճանաբար լուծում, տանում ե յերկրի խորքերը: Ստացվում ե նոր տեսակի հող, վո-րը թեև չի պարունակում մեծ քանակությամբ աղեր, բայց նույնպես անպետք ե լինում կուլտուրական բույսերի համար: Դրա պատճառն այն ե, վոր հողի բոլոր անցքերը լցվում են նուրբ մասնիկներով, հողը պնդանում ե, քարանում այնպես, վոր նրա մեջ ջուրը, ողը ե բույսերի արմատացանցը չեն կարողանում անցնել: Նման հողերը ես միայն հատուկ միլիորացիա-յի միջոցով կարելի յե վորակավորել ե կուլտուրական բույսերի համար պիտանի դարձնել:

Մեր նախալեռնային շրջաններում, Կոտայքի, Աշտարակի, Ալագյաղ կայարանի ե այլ վայրերի սահ-

մանհերքում, բնական պայմաններն արդեն զգալիորեն
փոխվում են: Այստեղ բարձրությունը ծովի մակերևույթից տատանվում է 1000 – 1200 մ. մեջ: Կլիմայական
պայմանները յուրահատուկ են նրանով, Վոբ, դաշտա-
վայրի հետ համեմատած, ջերմաստիճանն զգալիորեն
պակասում է, խոնավության ընդհանուր քանակը բար-
ձրանում և բուսական ծածկոցն առատանում է և նա
տալիս է ավելի շատ մասսա: Վերջինս տարբարվածի-
լով նոր պայմաններում, հողի մեջ առաջացնում է
ավելի շատ հումուս, քան մենք տեսանք կիսաանա-
պատային հողերում: Նախալեռնային շրջանների այս
հողերի հումուսի քանակը հասնում է 4⁰/₁₀-ի, շերտի
հաստությունը բավականին զգալի յե դառնում է նը-
կատվում է ստրուկտուրային թույլ կառուցվածք: Այս
հողերը նման են Ս. Ռուսաստանի հարավ-արևելյան
շրջանների այն հողերին, վերոնք կոչվում են շագանա-
կազույն հողեր և, չնայած մեր նախալեռնային շրջան-
ներում հիշյալ հողերի մի շարք առանձնահատկու-
թյուններին, մեզ մոտ ևս ընդունված է անվանել շա-
գանակազույն հողեր: Այս հողերն այդպիսործության,
պտղաբուծության և ձխախոտագործության համար
ամենահարմարն են, իսկ վերին մասերում պիտանի
յեն նաև հացահատիկային կուլտուրաների համար:

Նախալեռնային շրջաններն աստիճանաբար փո-
խարկվում են լեռնային տափաստանների, վերոնք Խ.
Հայաստանում ահագին տարածություններ են բռնում:
Այս տեսակին են պատկանում Լոռվա հարթավայրը,
Լենինականի տափաստանը, Համամլիի հովիտը, Աբա-
բանի դաշտը, Ախտայի շրջանը, Սևանա լճի ամբողջ
ովազանը՝ բացառությամբ լճի հյուսիսային ստիերի,

և մասամբ Ձախկեզուրը՝ Սիսիանի ու Գարիաի վերոշրջանները։ Լեռնային տափաստանները Հայաստանում, վերոնք ծովի մակերևույթից 1300—2200 մ. բարձր են, ունեն բոլորովին այլ կլիմայական պայմաններ, քան դաշտավայրը։

Այստեղ տարեկան միջին ջերմությունը տատանվում է 5—7⁰-ի սահմաններում, մթնոլորտային անդամների քանակը հասնում է մինչև 600 մ. մ., վրիժանների քանակը բնական պայմաններում առաջանում է խիտ բուսական ծածկոց։ Վերջինս, մեռնելուց հետո, թողնում է մեծ քանակությամբ բուսական մնացորդներ, վորոնք քայքայվում ու առաջացնում են նուշանքան հումուս, վորը հրաբխային նյութերի հողմահարումից առաջացած կրով հարուստ մասսայի հետ միասին տալիս են սևահողեր։

10. Հայաստանի զանազան շրջանները սեահողերն ունեն տարբեր քանակությամբ հումուս, վորք հետեւիւնք ե տարբեր բարձրության, դիրքի, կլիմայական ե այլն պայմանների: Որինակ՝ Լոռվա խոնավ հարթավայրը պարունակում ե հումուսի ամենամեծ քանակը, այն ե 10—12⁰/₀, Լենինականի դաշտը՝ 6⁰/₀, Իսկ Սեանա լճի ավազանում, Բայազետի շրջանում, վորը հայտնի յե յուր չորությամբ, հողի մեջ յեղած հումուսի քանակը համարյա 4⁰/₀ է: Ից չի բարձրանում: Հայաստանի սեահողերը, բացի որգանական նյութերի բարձր քանակից, ունեն բավականին հաստ շերտ, վորը հաճախ հասնում ե յերեք մետրի: Առանձնապես պիտի ընդունել այն, վոր մեր սեահողերը հարուստ են կրով, վորը զբաղան աշխատանք ե կատարում հողի գյուղատնտեսական հատկությունները ձեւավորելու:

ավելի մեղմ է, տարեկան խոնավությունը բավականին բարձր, մենք ունենք անտառային բուսականությամբ ծածկված տարածություններ, վորտեղ առաջ են յեկել յուրահատուկ անտառային հողեր: Վերջիններս բոլորովին տարբերվում են սևահողերից, իրենց ընկուզանման, խոշոր ու կոպիտ ստորուկտուրայով, ինչպես նաև հումուսի համեմատաբար քիչ քանակությամբ: Պետք է ասել, վոր ե՛ անտառային, ե՛ լեռնամարգագետնային հողերը համարյա զուրկ են կարբոնատներից (որ. կրից), վորոնք այդ տեղերի մթնոլորտային առատ տեղումների շնորհիվ լվացվում են ու տարվում ցածրադիր վայրերը և յերկրի խորքերը:

Վերջապես պետք է նշել, վոր իմ. Հայաստանի վորոշ մասերում մենք ունենք նաև ճահճային հողեր, վորոնք առաջանում են խոնավության և այլ կլիմայական պայմանների հետևանքով, մեռած բուսական մասսայի լիովին չքայքայվելուց, այլ և կիսաքայքայված դրությամբ անընդհատ կուտակվելուց: Այդ հողերից կուլտուրական բույսերը չեն կարողանում սնունդ վերցնել և աճել, մինչև վոր ճահճուտները մեկտրացիայի չեն յենթարկվում, մշակվում:

Ճահճային հողեր կարող են լինել բոլոր այն շրջաններում, ուր կամ ստորերկրյա ջրերը յերկրի մակերևութին մոտ են, կամ տեղի յեն ունենում առատ տեղումներ և, վերջապես, յերբ բուսական մնացորդներն արագ չեն քայքայվում:

Այսպես, ուրեմն, մենք տեսնում ենք, վոր իմ. Հայաստանի խայտաբղետ բնապատմական պայմանների պատճառով, փոքր տերիտորիայի վրա ունենք՝ կիսաանապատային, կուլտուր-վոտոգելի, աղուտային, շագա-

նակադույն, սև լեռնամարգագետնային, ճավալված ու անտառային հողեր, այսինքն այն բոլոր հողային տարատեսակները, վորոնք գտնվում են իմ. Միության ամենահարավային՝ պարսկական սահմաններից մինչև հեռավոր հյուսիսային Սառուցյալ ովկիանոսի ափերը, փոխած վիթխարածավալ տերիտորիայի վրա:

3. ԻՆՁՊԵՍ ԶԱՎԱՔԵԼ ՀՈՂԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Նախքան հիմնական ցուցումներ անելու այն մասին, թե սուրբիստական երթևեկությանը ժամանակ ինչպես պետք է հավաքել հողի նմուշները, վորպեսզի գրանք չկորցնեն իրենց բարձր արժեքը, անհրաժեշտ է մի քանի խոսք ասել հողի կառուցվածքի մասին:

Առաջին գլխում մենք ասացինք, վոր բուսական մնացորդների տարբալուծման հետևանքով, հողի վերնաշերտում, վորոշ խորության սահմաններում, կուտակվում է հումուս, բայց աստիճանաբար խորանալով, նրա քանակը կամաց-կամաց նվազում է և հետո բոլորովին աննկատելի դառնում: Յեթե մենք դաշտում փորենք 1--1½ մետր խորությամբ մի փոս, կարվածք, նրա պատերի վրա պարզորոշ կգտանք յերեք հիմնական շերտ. —

I շերտը, վորը պարունակում է մեծ քանակությամբ հումուս, որինակ՝ սևահողում ունի մոտ 40 ս. մ. հաստություն, կոչվում է A հորիզոն:


II շերտը, վորի հումուսն առաջինի համեմատությամբ շատ քիչ է, բայց անպայման ունի, կոչվում է B հորիզոն և վերջապես՝

III շերտը, վորտեղ բոլորովին հումուս չկա, կոչվում է C հորիզոն:



Այդ յերեք հիմնական շերտերը (տես նկ. 1) շատ հեշտաթյամբ կարելի չէ տարբերել միմյանցից: **A** հորիզոնն ամենից շատ և ներկված հումուսով, ունի սև գույն, բացի կիսաանապատային հողերից: **B** հորիզոնը թույլ և ներկված, առաջինի համեմատությամբ ունի բաց գույն, իսկ **C** հորիզոնն ունի դեղին կամ սպիտաբար կեղտոտ կրի գույն:


Հողի նմուշները հավաքելու ժամանակ պիտի գտնել այս հիմնական հորիզոններն իրարից, վոչ մի ղեպ-



նկ. 1.

քուժ իրար չպիտի խառնել, այլապես հավաքված նյութերը հողի արտադրողական **A** արժեքի վերոշման համար անպետք կլինեն, վերովհետև վերոհիշյալ շերտերն ունեն մեկ-մեկուց խիստ կերպով տարբերվող հատկություններ: **B** թյունները նմուշներ հավաքելու համար եքսկուրսիայի վայրում անհրաժեշտ և ընտրել հարթ տարածություն, վորը ծածկված կլինի ըստ հնարավորին միատեսակ բույսերով: Այդտեղ պիտի փորել կտրվածք, կամ փոս, վորի լայնությունը պիտի լինի 50—60

նկ. 2) փոսը պիտի լինի աստիճաններով, վորը վոչ միայն մտնել գուրս գալուն և ոգնում, այլ փորելու աշխատանքի կեսը կրճատում է, իսկ նմուշներ հա-



նկ. 2.

տ.մ., յերկարությունը՝ $1\frac{1}{2}$ մետր, իսկ խորությունը՝ մինչև $1\frac{1}{2}$ մետր: Փոսը պետք է լինի ուղիղ պատերով և այն հաշվով, վորպեսզի հնարավոր լինի նրա մեջ շարժվել և աշխատել: Ինչպես նկարի վրա յե յերևում (տես

նելու համար մեղ հարկավոր ե փոսի միայն մի կող-
քը: Փոսի ուղղութիւնը պիտի բնութիւն աշխատ, վոր
նրա հարթ կողքը համասար չափով լուսավորված
լինի:

Պետք ե փոսը փորելուց հետո լապատկայով կամ
ստամոսկայով (стамека) կոկել, մաքրել մի կողքը,
վորից հետո նրա վրա դատել առանձին հորիզոնները
դանակով սահմանաժրերը գծելով, և ապա ամեն մեկի
հաստութիւնը չափել սանտիմետրով և նշանակել հա-
մապատասխան տետրի մեջ:

Յուրաքանչյուր նման փոսը պետք ե համարա-
կալել, գրել նրա աշխարհագրական դիրքը, ամսաթիվը,
նկարագրել ճիշտ տեղը, վերցրած նմուշների քանակը
և ամեն մեկի խորութիւնը: Այնպէս ելապատկայով,
ստամոսկայով կամ դանակով կտրել ու հանել հողի վո-
րը քանակ աշխատ, վոր նա հողի միջին պատկերն
ունենա, մոտավորապես 1—2 կիլոյի չափով ու տե-
ղավորել բյազից պատրաստված փոքրիկ պարկերի մեջ
կամ փաթաթել հաստ թղթով: Հողի նմուշի հետ պիտի
դնել մի կտրոն, վորի վրա պարզ պիտի գրել փոսի
համարը, տեղը, նմուշի խորութիւնը, վերցրած ժամա-
նակի թիվը և վերցնողի ազգանունը: Նույնը քիմիա-
կան մատիւրով պիտի գրել նաև պարկի յերեսից, նը-
մուշը կապելուց հետո:

Վերին աստիճանի կարեւոր ե հատուկ տետրի մեջ
գրել վորոշ մանրամասնութիւններ առանձին շերտերի
նկատմամբ, որինակ՝ խոնավ ե նա, թե չոր, ամուր,
թե փխրուն, փոշիացած, թե հատիկավոր կամ կոշտա-
վոր, ինչպիսի կողմնակի նյութեր են նկատուի նրա

մեջ (քար, փայտ, բույսերի մնացորդներ, կրի առան-
ձին բծեր և այլն):

Շատ կարեւոր ե վորոշել հողի առանձին հորի-
սոնների կարբոնատները կամ կրի մոտավոր քանակու-
թիւնն ուղղակի դաշտում: Այդ պիտի անել հետեւյալ
կերպ: Եքսկուրսիա դնալիս պետք ե վերցնել մի փոք-
րիկ սրվակ թույլ աղաթթու, վորը կարելի յի վեր-
ցնել շրջանային բոլոր գեղատներէից: Փոսը քանդե-
լուց և առանձին հորիզոնների բաժանելուց հետո, ա-
մեն շերտից վերցնել քիչ հող և վրան աղդել աղաթթի-
վի կաթիլով: Յեթե հողը դրանից թշնա ե բարձրանա-
նալիկներ, ուրեմն այդ հողը հարուստ ե կարբոնատնե-
րով: Կարելի յի հաշվեառնել այդ յերեսութի, այսին-
քն՝ «յեռալու» ինտենսիվութիւնը՝ գրել—յեռում ե
թույլ, ուժեղ, շատ ուժեղ և այլն նշանակումներ: Ասան-
թույլ շերտերի կարբոնատութիւնը վորոշելուց հետո, ա-
ղաթթուն աստիճանաբար կաթեցնելով՝ գտնել այն գի-
ծը փոսի հղկած պատի վրա, վորտիցից ներքե արդեն
«յեռում» ե հողը և սանտիմետրով ճիշտ կերպով չա-
փել ու գրել այդ խորութիւնը: Խ. Հայաստանի դաշ-
տավայրերի հողերում կարբոնատներն սկսում են ուղ-
ղակի հողի մակերեսութից, վորոտովոյ տեղերում մի
քիչ խորը, սեահողերում 20—40 ս. մ. սահմաններում,
խիւ անտառային և լեռնա-մարգագետնային հողերում
ամբողջ խորութիւնի վրա աղաթթուն վոշ մի աղդե-
ցութիւն չի ունենում: Կարբոնատութիւնի վորոշ-
ման ժամանակ, վերցրված նմուշների վրա վոշ մի
գեպքում չի կարելի աղաթթու կաթեցնել, վորովհետեւ
այդ գեպքում նրանք կանպետքաւան լաբորատորիա-
կան հետազոտութիւն համար:

Վերին աստիճանի խնամքով պիտի վերաբերվել հաճաքած նյութերին. յեթե նրանք թաց են, պիտի չորացնել, վորպեսզի չփչանան մինչև լաբորատորիա տանելը, միաժամանակ աշխատելով նրանց չբփշրել, վորքան հնարավոր և պահպանել նրանց բնական կառուցվածքը: Այս պահանջների ճիշտ կատարման դեպքում միայն եքսկուրսիայի ժամանակ հաճաքած հողերի նշումները կարող են գիտական ու գործնական լուրջ նշանակություն ունենալ:

Մեր պրոլետարիատները, վորոնք շրջելու յեն Ս. Հայաստանի բոլոր շրջանները, գիտակցելով իրենց կատարելիք աշխատանքի մեծ նշանակությունը և պատասխանատվությունը, պետք և լուրջ ուշադրություն դիտեն այս կամ այն տեսակի հողերի բնական կառուցվածքը, մեր յերկրի դեռ լրիվ չուսումնասիրված ու խայտառղեա հողային շրջաններից արժեքավոր նույթեր հալածեն և այդպիսով նպաստեն բնական մեր հողային հարստությունների հայտնաբերմանը և նրանց լայն շահագործման ճանապարհով աջակցեն սոցիալիզմի կառուցման կարևոր ֆրոնտի սոցիալիստական գյուղատնտեսության արտադրողականության բարձրացման մեծ գործին:



ԳԻՆԸ 20 ԿՈՊ.



Х. МИРИМАНЯН

**Что такое почва и какие почвы имеют
в Советской Армении**

Армсельхозгиз

1934

Эр

«Ազգային գրադարան»



NL0285915

15317